62. ՄԱՐԴՈՒ ԳԼԽՈՒ ԳՐԱԾ ՁԱՎԻՐԻ

Կէղնի, չէղնի մեկ աղա մարդ մի կէղնի։ Էդ աղա մարդու հարս լէ էրկու խոդով կէղնի։

Մեկ վաճառական մարդ մի, ինք ուր կնիկ գիգան էդ աղա մարդուն էդ օր կէղին կոնախ։

Էդ աղա մարդ կէրթա հ'օդեն կնստի. էդ կնիկ լէ բարի մարդ կէղնի ու աստվածավախ կէղնի։ Էդի լէ աղա մարդու տան դեն հ'օդի մե մեջ կնկտոց խեչ կնստի։

Կես գիշերին էդ աղա մարդու հարս կկանի ցավ. կպառկի տղե մի կբերա։ Տատմեր գիգա տղեն կառնա, պորտ կկտրա, կպլուվա, կփաթրթա, ու իդա կնիկ լէ կանի էդ տեխ սեյր կէնա։ Կտեսնի օր էրկու մարդ էկան փողան կանան։ Էդ էրկու մարդ խրիշտակ կէ-ղին։ Էդ մեկ խրիշտակ կվերու, կասա.

— Ըդոր մահվան նշանակութեն իմա՞լ պրտի դրվի։

Էն մեկ խրիշտակ կվերցու, կասա.— Էդի ինչ ժամանակ օր փսակվավ, օր հարսն ու փեսեն մեկտեխեցին, դել գիգա ղփեսի գլոխ կուտա։— Խրիշտակն լէ կեսա.— Իդոր մահվանալու նշա-նակն լէ էդ ա։

Ու կդառնան էդ խրիշտակներ կխամբարձին։ Առավոտուն սյր լուս կրացվի, էդ վաճառական դուրս գելնա, կլվացվի, ուր աստ-ված կկանչա ու հ'օդեն կէրթա։

Էդ մարդուն կերակուլ կպատրաստին, կերակուլ կուտին։ Էդ կնիկ լէ կերակուլ կուտա ու կըսա աղա մարդուն։

— Մըր իզին տվեք, օր հեծնինք ու էրթանք մըր տուն։

Կըսա.— Իզին ա։

Իրիկ լէ դելնի կխեծնի, կնիկ լէ գելնի կխեծնի, կնիկ կվերու կըսա թե.

— Էս գիշեր աղի հարս պառկավ ու տղե մի բերեց, ես լէ էնտեխ կանուկ ենք։ Ես տեսա էրկու մարդ էկան փողան մութ տեխ կանան։ Էն մեկ մարդ էն մեկելին ըսավ. «Էս էրեխեն ի՞նչ դանով պրտի մահանա»։ Ըսավ. «Էդ տղեն օր կարքեցին, ուրին կնիկ բերեցին օր տարան մեկտեխեցին, գել դիգա ընդոր գլոխ կուտա, ընդոր մայ լէ էդպես դրվավ, ընդոր գլխու դիր լէ էտմըլա նշանակվավ»,

Էդ կնիկ օր վաճառականի էդ խոսքեր կըսա, էնի վաճառական ղազեն կխանչա, կըսա.— Աղա, էստեխ էգո,— կըսա,— աչք լուա, աղա, քըզի թաժա նոր մանուկ տղե մ'էղե, աստված հորով մորով ճոչցու։

Տղեն լէ կըսա.— Շնորհակալ իմ, ծեռքդ ի կպաքա։

Կեսա.— Ես մեկ պահման կենիմ խըդ քզի։

Կըսա.— Ի՞նչ պահման։

Կըսա.— Իմ պահման էն ա, օր ես պրտի էղնիմ ըդ տղի քավոր, խաչ բռնիմ վըր դլխուն։

Աղեն կըսա,— Նոր էղեր ա, ուր մամու մոտեն, ես ի՞նչ գինամ սախ կմնա՞, չմնա՞։

Կըսա.— Սախ կմնա, ես գինամ, ես ֆիլան քաղքեն իմ։ — Ուր լաղրը լէ կսալըխա, պահման կգրին. իրարուց խաթըր կառնին ու կէրթան։

Օրերու մեկ էդ տղեն ապրավ հարի տաս տարի, թըմավ։ Էլավ իդա հախսի աղեն դնաց խորոտիկ ախչիկ մի տեսավ ու նշանեց ուր թոռան։ Էլավ պատրաստութեն տեսավ, էրկու ծիավորով գնաց էդ վաճառականի մոտ տեսութեն, օր առնի հ'իգա, ըդ տղին էղնի քավոր։ Գնաց, վաճառական էլավ, առավ լավ փեշքեշներ, ինչպես օր օրենքն էր, էլան խըտ իրար ճանփախ ընգան ու էկան։

Էդ վաճառական էկավ ու ուր սանախոր տուն իշավ։

Պատրաստեցին ընդոր կեր ու խում։ Կերան, ուրախցան, ուրախնալով հետով էդ վաճառական պատմեց սանախոր, ըսեց.

— Դու գինտ՞ս, ես իմալ քավոր կէղնիմ։

Սանախեր վերուց ըսեց.— Քավոր աղա, ի՞մալ։

Ըսավ.— Ես օր էղնիմ թաժա սանախոր քավոր, պըտի ես թաքավոր աղի համար թաժա հ'օդե մի քսով ու ջխսով կտրածուրիկ քարով լավ օրնավոր հ'օդե մի սուքիմ։

Սանախեր ըսեց.— Դու դինաս, դու իմալ օր ամր էնիս, մենք լէ կընթունինք, մեր մոտ լէ կաբուլ ա։

Էդ վաճառական ու քավոր աղեն հ'ելավ, մեկ եռսուն խատ մշակ բերեց, տաս խատ լէ ուսթա, ու սելեր բերեց, քար կտրեցին ու կրեցին ու ուսթեք հ'օդեն շարեցին։ Հ'օդեն շարեցին ու պրծան։

Էլավ քավոր, ինչ օր խարջ էղեր էր ուր ջոբեն տվեց ու ուսթեսներ ու մշկներ ճամփու դրեց։

Ըսեց.— Սանախեր, դե էլի ընձի դհոլ ու քուսան բեր ես պըտի իմ թաքավորի խարսնիք բռնիմ։

Ելան գացին գոլ ու քուսան բերեցին, խարսնիք բռնեցին։ Իրեք օր ու գիշեր գոլ ու քուսան զարդեցին ու խարսնիս էլեցին։

Իրեք օր պրծան ու գացին դհոլով ու քուսնով ուրանց թաժա հարս առին ու էկան։ Ու տղեն առան գացին փսակ։ Տարան ժամ փսակեցին, առան էկան, տարան հ'օդեն։ Էրկու օր կեր ու խում, ուրախութեն էրեցին, օր թըման, զհարս ու փեսեն մեկտեխեցին։

Էդ քավորն ըսավ թը.— Ես էս գիշեր պըտի իմ սանկան կանիմ կտրաուլ (պահակ)։

Սանախերն ըսեց.— Քավո՛ր աղա, գու դինաս, իմալ դինաս, էդմլա էնա։

Քավոր աղեն էր, թվանք առեց ուր ծեռ, զդուռ լավ մի փակեց, ըսեց. «Սանք գել հ'ո՞ւստեն գիգա, զթաքավորի գլոխ կուտա»։

Քավոր աղեն չքնավ, մուղաթ կեցավ հարի լուս։ Բարի լուսն օր բացվավ, քավոր աղեն գնաց հ'օդեն։

Սանախերն էր էլավ մեկ կաֆեմ էփեց, քավոր աղին ըսավ թե.— Առ էս փալնիք ու գացեք հարսն ու փեսեն տեսեք, իմ իրավունքից դուրս ա։

Էլան բալնիքն առան տարան տվին տղի մերն։ Տղի մեր բալնիքն առավ, գնաց դուռ բացեց, դուռ բացեց, տեսավ օր հանդե հարս նստե փեսի գլխուն ու գիլա։ Կեսուր գնաց ըսեց թե.

— Հարս, հ'որի՞ գիլաս։

Ըսավ.— Օր ես չիլամ, ո՞րն իլա։ Ես ու իմ իրիկ տկլոզցանք պառկանք, ես տեսա օր սև բոլոշ մի փանջարից ներս մտավ, օր էկավ մոտիկցավ ընձի, ես էղա դել ու ես էլա թաժա փեսի գլոխ ու կերա։ Ես օր կերա պրծա, ու ես էմլան էղա էն հարս, նստա, ու ես նստիր իմ գիլամ թաժա փեսի գլխուն։

Ու խաբար տարան էդ վաճառական քավոր աղին ու էդ տղի ապոյին, թե ի՞նչ կասիք, խարս էղե գել ու զիրկա գլոխ կերեր է։

Էդ տեխ քավոր աղեն ինք ուրին ըսավ. «Օղորթ յազըլան բողուլմաղ—դլխու դրած չավիրի»։

Էլավ քավոր աղեն, էդ տղի հերն ու ապոն լալման գացին մտան թագավորի հ՚օդեն։ Տեսան օր թագավորի ջանդակ էնտեխ, ու թագավորի գլոխ չկա։

Իդա հախսի վաճառական ըսավ.— Ըն օրն օր ես ու իմ կնիկ էկանք ծեր տուն, էղանք կոնախ, հարսն օր պառկավ ու էդ տղեն բերեց, իմ կնիկ խարսի խեչ կանուկ էր, տեսավ օր էրկու մարդ էկան ու մութ փողան կանան, էն մեկ մարդ է մեկել մարդուն ըսնց. «էդ տղեն ի՞նչ դռնով պըտի մահանա», էն մեկել լէ ըսավ թե՝ «էս տղեն ինչ քախ օր կարքեցին, էդ հարսն ու փեսեն հ՚օդի մեջ օր մեկտեխեցին, էն ժամանակ գել գիգա ու տղի գլոխ կուտա, տղեն ուր մուրալին չհասնի, էս տղի մայ լէ էս դռնով պըտի գրվի»— ըսեց էդ մարդ։ — Իմ կնիկ օր զէդի տեսավ, ընձիկ մեկ-մեկ պատմեց, ես լէ էլա ըսի օր էդմլա ա, ես պըտի էդ տղին էղնիմ քավոր, ես իդա հախսի խըտ քզի պահման դրի, գացի, օր ես ըդ տղի քավոր պըտի էղնիմ։ «էն հ՚ապով ես էս խորոտիկ հ՚օդեն սուքեցի, լավ, մոխքամ (հաստատուն) դուռ սուքեցի, ու թվանքն առա իմ ծեռ ու կարաուլ կանա, տեսնանք, ասի, էդ գել հ՚ոստեն գիգա կուտա. ես կարաուլ կանա հարի լուս։ Տե՛ս աստվածութեն էնպես հրամայեց օր, էդ տղի նշանածն էղավ գել, ու էլավ ու զուր իրկա գլոխ կերավ, օղորթ ա օր մարդու դլխու գրած չավիրի. ինչխ օր գրվի աստվածութեն, պետք ա կատարվի։

Տղի մամն ու պապն ու ապոն, քավոր, դուռ դրկիցով լալով օղփալով տարան, երգ ըսելով տարան ու խորեցին։

Ինոնք չխասան ուրանց մուրազին, մենք խասնինք մեր մուրազին։

Երկնուց իրեք խնձոր պատավ. մեկ ըսողին, մեկ լսողին, մեկ լէ կարթացողին։